«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

5.05.2015

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանին

Հարգելի պարոն Աշոտյան,

«Հետք»-ը թիվ 99-հ-4 հարցմամբ խնդրել էր տրամադրել Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և Կրթության և գիտության նախարարության միջև կնքված պայմանագիրը և դրանում կատարված փոփոխությունների համաձայնագրերը:

Ի պատասխան հարցմանը՝ տրամադրվել է մեկ համաձայանգիր՝ ուսանողների թվաքանակի վերաբերյալ: Պայամանգրում, ինչպես նշվել է ձեր պատասխանում, չի կատարվել գումարային փոփոխություն: Որպես հիմնավորում նշել եք, որ մեկ ուսանողի ծախսը տարեվերջին աճել է տարեսկզբի նկատմամբ:

Մեկ ուսանողի ծախսը 2014թ. բյուջեի մասին օրենքով կազմել է **561.7** հազար դրամ: Բյուջեի հաստատվելուց հետո կնքվել է պայմանգիրը: Խնդրում ենք հստակեցնել.

- Մեկ ուսանողի ֆինանսական ծախսի մասով ի՞նչ փոփոխության մասին է խոսքը: Որքա՞ն է այդ ծախսը կազմել տարեսկզբին, որքա՞ն տարեվերջին:
- Ինչպե՞ս է կատարվել այս փոփոխությունը, եթե այն հաստատվել է «Բյուջեի մասին» 2014թ. օրենքով (տրամադրել մեկ ուսանողի ֆինանսական ծախսի աճը հիմնավորող համապատասխան իրավական ակտը, ի՞նչ հիմքով է բուհը կատարել այդ փոփոխությունը) : Ինչու է տարեվերջին մեծացել մեկ ուսանողի ֆինանսական ծախսի չափը տարեսկզբի նկատմամբ (նշել բոլոր հանգամանքները, որոնց պատճառով բուհը անհրաժեշտություն է համարել մեծացնելու ֆինանսական ծախսի չափը) :

«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի նախագահ,
«Հետք» թերթի խմբագիր՝ Էդիկ Բաղդասարյան